

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՕԶԻՏՕՐՆԵՐ

(20-րդ դար)



(Շարունակութիւն տես Բազմավէպ, 1926 էջ 29)

ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔԵԱՆ

1912 Դեկտեմբեր 26-ին թիֆլիսում կազմակերպուում է գրական-երաժշտական երեկոյթ, նւիրած Ռուսահայ մտաւոր վերածնութեան նշանաւոր գործիչ և «Հիստափայլ» խմբագիր Ստեփաննոս Նազարեանին: Դա կուլտուրական մի մեծ տօն էր, որը պէտք էր առանձին շքով տօնել: Եւ ահա Սպ. Մելիքեանն իր քառաձայն խմբով փայլ է տալիս երեկոյթին: Այնուհետև նրա խումբը մասնակցում է Մայիս 11-ի համերգին: Այդ օրը նա կարողանում է հասարակութիւնն իրեն գրաւել և համերգին տիրապետել:

Գալիս է 1913 թւականը: Դա Սպ. Մելիքեանի երաժշտական-համերգային գործունէութեան ամենափայլուն շրջաններին մէկը կարելի է համարել: Այդ թւականին է, որ նա թևակոխում է երաժշտական էտիլցիայի բեղմնաւորման շրջանը և անում է խիզախ թռչչոցներ: Նա հարիւր տասը հոգուց բաղկացած խմբով և սիմֆոնիկ օրկէստրով վրաց ազնւականների թատրոնում առաջին անգամ թնդացնում է իր «Ախրամար» երաժշտական լէգէնդան և մի քանի ժողովրդական երգեր: Համերգը գեղարեւտական մեծ աջողութիւն է ունենում և արժանանում մամուլի զնահատութեան: Ահա թէ ինչ է գրում Յ. Զիւրմկը «Հորիզոն»-ի (1913) N. 285-ում.

«Թումանեանի «Ախթամարը» մի եզակի գոհար է մեր գրականութեան մէջ ... Տալ նրան դրամատիք չունչ, Վազնեան ոգով, որպէս մի ֆական երգ, կը լինէր ամենայարմարը. մտում է միայն ձևն ու ծրագիրը, որ և զգւար չէ եղել Պ. Մելիքեանի համար, երբ նա յիշել է Բեթհովենին, առանձնապէս նրա իններորդ սինֆոնիան»:

... Մելիքեանի այս գործը հեռու է «Ախթամարի» պատկերացումը լինելուց, բայց դրա փոխարէն նա ցոյց տւեց, որ կարող ոչ է, խորութիւններ ունի, հստակացել է երաժշտութեան փիլիսոփայութիւնը և փորձում է թափանցել նրա միջուկը»:

Մի այլ քննադատ՝ Յովսէփ Տէր Դատրեան «Մշակ»-ի (1913) N. 291-ում. այսպէս է արտայայտուում.

«Ինձ համար էական նշանակութիւն ունեցող ձայների գեղեցիկ համախմբութիւնն և երաժշտական երկի կօնսորկցիան է. և այդ տեսակէտից Պ. Սպ. Մելիքեանի «Ախթամարը» տաղանդաւոր գրածք է... Ռոտաւորի հոգեբանական կողմը հարազատ կերպով է պահւած՝ նաև երաժշտութեան մէջ, որ նոյն վիպական ընոյթն ունին երկուսն էլ, առաջին մասում ժպտուն և զւարթ, իսկ երկրորդ մասում թախծոտ և յուսահատ, և որ այդ արամազորութիւնների կօնտրաստը երաժշտութեան մէջ արւում է երբեմն նոյն մօտիւով, միայն մի տեղ մատօր և միւս տեղը մինօր, մի հանգամանք, որ շատ է նպաստում երկի աճողական սիւնթեանը:

... Առհասարակ թո այդ պօէման գտնում եմ գեղեցիկ. առանձնապէս տաղանդաւոր ար.

տայայտութիւն են գտել այն տեղերը, որ տեղ մեղմութիւն, քնցուցիւն, վիշտ անյոյս տիրութիւն (ֆինալը) կայ և կարծէք այժմանից կարելի է գուշակել, թէ Պ. Սպ. Մեխրեանն ինչպիսի նիւթերի համար աւելի շնորհալի կը լինի»:

Մագրում է համաշխարհային պատերազմը: Տանկահայ ժողովրդի մի մասը թշուառ և անօգնական փախչում է կովկաս: Պէտք էր օգնութեան հասնել զաղթական բեկորներին: Պէտք էր ապահովել նրանց սօցխալական դրութիւնը: Էջահա ասպարէզ է գալիս Սպ. Մեխրեանը և Մայիս 10-ին (1915), «Արտիստիքական ընկերութեան դահլիճում», յօգուտ փախստականների կազմակերպում է մի մեծ համերգ, որի մասին ուսանական «կապիսուկո Սյափա» թերթի N. 105-ում մի քննադատ գրում է...

«Կրահրը կազմուած էր զլիւարապէս հայկական երգերից, Եկմալեանի, Կոմիտասի, Սպ. Մեխրեանի, Ռոմ. Մեխրեանի, Գրիգոր Միրզոյեանի հեղինակութիւններից: Համերգը ահագին հասարակութիւն էր հաւաքել և անցաւ մեծ աշողութեամբ: Խումբը հնչելն էր և հոյակապ»:

Մի այլ քննադատ՝ Պ. Սրահմտեան «Մշակ»-ի (1915) N. 100-ում գրում է.

«Սպ. Մեխրեանը երկար տարիներ վարել և այժմ էլ ստիճանութեամբ վարում է երաժշտութեան դաստափ պաշտօնը, ունի փորձառութիւն և այդ պատճառով էլ աշողում է նրան կազմակերպել երգեցիկ խումբ և առհասարակ խմբական երգեցողութիւն»:

Համերգում երգեցին մի շարք հայերէն և ռուսերէն երգեր, որոնց մէջ աչքի էին ընկնում զլիւարապէս հայ ժողովրդական երգերը, որ երգում էր ամբողջ խումբը, մեծ հետաքրքրութիւն և հոգեկան հանդը պատճառելով հանդիսականներին... հասարակութեան խնդրանք՝ իւրաքանչիւր երբ կրկնեց երկրորդ անգամ... Սպ. Մեխրեան արժանացաւ երկարատև ծափահարութեան»:

Նոյն թւի Մարտ 8-ին Թիֆլիսի Խօջեվանքում կատարւում է մեծ ստեղծագործող Մակար Եկմալեանի մահուան տասնամեայ հոգեհանգստի պահանջէսը, որին մասնակցում է Սպ. Մեխրեանը Ներսեսեան զպրօցի երգեցիկ խմբով: Մեծ արեւստագէտն անշուք հողաթմբի առաջ կանգնած խումբն րազմութեան համակում է խումբը խոր և վշտագին զգացմունքով: Այդ տպաւորութեան ներքոյ Քեցեկեկտը «Մշակ»-ի (1915) N. 51-ում գրում է.

«Հմարտ պէտք է ստել, Ներսեսեան զպրօցի երգեցիկ խումբը երգում էր շնորհալի կերպով իր հմուտ խմբապետ Սպիրիդոն Մեխրեանի ղեկավարութեամբ... Տխուր սգահանդէսն աւարտեց երգեցիկ խմբի քառանկարն «Հայր մեր»ի երգեցողութեամբ, որի վերջին հնչիւնները, սսես, միախառնեցին Եկմալեանի աներեւոյթ խողեւալ հոգու հետ»...

1916 թւին արեւստագէտն աւելի մեծ հռանդով առաջ է տանում իր հպմերգային գործունէութիւնը: Մայիս 7-ին նա «Արտիստիքական ընկ. դահլիճում» տալիս է մի այլ համերգ, ուր խումբը երգում է նորագոյն հայ երաժիշտների և եւրոպական ու ուսական յայտնի հեղինակների կտորները: Սպ. Մեխրեանը պատուով է դուրս գալիս և հասարակութեան կողմից արժանանում խրախուսանքի և ծաղկեփնջերի: Այդ առիթով ուսանական «Թիֆլիսիկի Լիտտիկ»-ի Մայիս 12-ի համարում Գոյլէ գրում է.

«Խումբը ղեկավարում էր Սպ. Մեխրեանը, որ ստեղծագործող լինելով՝ ցոյց տուց իրեն նաև իբրև տաղանդաւոր խմբավար, որ կարող է երգեցիկ խմբից զեղեցիկ ու հոյակապ անսամբ ստեղծել»:

1917 թւին Սպ. Մեխրեանն աւելի է խորանում իր համերգային գործունէութեան մէջ: Նա խորապէս գիտակցելով, որ խումբը միակ ապարատն է հայ երաժշտական պրօպագանդայի արտայայտութեան, իր աշակերտ-աշակերտուհիներից

կազմում է 80 հոգուց բաղկացած « Երգեցիկ միութեան խումբը », որ թիֆլիսում միակ արտայայտչն է հանդիսանում հայկական երաժշտական կուլտուրայի խումբը տալիս է ո՛չ միայն իր սեփական համերգները, այլ և մասնակցում է թիֆլիսի « Հայոց երաժշտական ընկերութեան » համերգներին, իրականացնում է « Կուլիտասեան » համերգները և առնասարակ արձագանգ է տալիս թիֆլիսի բոլոր հիմնարկութիւններին և միութիւնների հրաւերներին: Այդպիսով խումբը ժողովրդի գեղագիտական ճաշակի զարգացման գործում անգնահատելի դեր է խաղում:

1918 թւականից սկսում է մի նոր շրջան: Այդ թւից արեւստագէտն իր խմբական գործունէութիւնն աւելի է խորացնում և զնում իր պատշաճ բարձրութեան վրայ: Նա ներսեւեան զարոյցի խմբին միացնում է Յովնանեան և Գայիա-նեան միջնակարգ օրիորդաց զարոյցի երգչուհիներին և հիմք դնում « թիֆլիսի հայոց երգեցիկ ընկերութեան », որը թիֆլիսի հայութեան համար միակ կատարելազորութեան համերգային ույժն է ներկայացնում: Սակայն ինչպիսի ծրագրով է առաջնորդում ընկերութիւնը: Նա ընդգրկում է միայն մի լոզունգ « հայ արեւստի պաշտամունքը »: Եւ ահա կարճ ժամանակամիջոցում անում է որոշ նւաճումներ: Մի կողմից ընկերութիւնն իր դրօշի ներքոյ է համախմբում բոլոր հայ երաժշտասէրներին, աւելի թափով ցուցադրելու համար ժողովրդական երգի ոգին, միւս կողմից կազմակերպում է մի շարք դասախոսութիւններ և համերգներ՝ հետաքրքրութիւն ստեղծելով հասարակութեան մէջ գէպի հայ երաժշտութիւնը:

Ընկերութիւնն իր ամենաառաջին համերգը տալիս է 1918 թ. Նոյեմբեր 2ին, կոնսերւատօրիայի դահլիճում: Խումբը ղեկավարում է Սպ. Մելիքեանը, որ գեղարեսեստական մեծ աղողութիւն ունենում և արժանանում ժամուրի գնահատութեան: « Մշակ » N. 228-ում (1918) Հ. Պետ համերգի մասին իր տպաւորութիւնները խտացնում է այսպէս.

« Սպ. Մելիքեանի հմուտ և ըստ ամենայնի մտածած, անվրէպ ու փորձառու ձեռքի տակ ձևադրած այս համերգը կարծէք բանում է նախադուռն գէպի հայկական սեփական աշխարհի ժողովրդական իսկական ու բնական ստեղծագործութիւնը: « Սարէն եկա » խմբերգը, զուգուրելով հանդիսականի լսողութիւնը, ճեղքում է հեռաւոր հորիզոններ ու հասցնում այնտեղ, ուր գուլաջ գետերի հետ սրճի ողբն է հոսում դեղին արտերի վրայով, ուր աշխատաւոր գեղջուկը գերանդուտ հետ գրկած իր սպազան է կրիւմ: »

Նոյն համերգի մասին « Հորիզոն » (1918) N. 230-ում Գիսայ կրում է:

« Երբեք որակի, քանակի, խմբագրութեան ճաշակի ու երգերի յաշտ ընտրութեան տեսակետից ևս այս համերգը սովորականներից չէր: 80 հոգուց բաղկացած երկուս քառաձայն շարժուն, ձայնամարզութեամբ զբաղած և ամբողջապէս չափի վրայ կեդրոնացող խումբը չնչին թերութիւններով օրինակելի երգեց՝ Սպ. Մելիքեանի, Հ. Կ. Վարդապետի, Եճմալեանի և Տէր-Ղեւոնդեանի ժողովրդական հարազատ շեշտով ներգաշխակութիւնները, որոնց մէջ Սպ. Մելիքեանի « Քրէկ կոնդան », Եր-Ղեւոնդեանի « Արի ընկերք » և մանաւանդ Հ. Կոմիտասի « Հօլ արա իրօն » գերազանցեցին իրենց հայկական կօլօրիտով, հարազատ շեշտով ու գեղարեսեստական ամբողջութեամբ... Երգեցողութեան ամբողջ ընթացքում նկատուով էր հմուտ և կարող խմբագրութի (Սպ. Մելիքեանի) ինտենսիւ աշխատանքը, որի յաշտօղ գործերին ենք սպասում: »

1919 թւականն է: Այդ թւին թիֆլիսի երաժշտագէտներն իրենց հայեացքն ուղղում են հեռաւոր մի հորիզոն, գէպի Փարբդ: Այնտեղ հիւանդանոցներից մէկում տառապում էր մեծ արեստագէտը՝ կոմիտաս: Անհրաժեշտ էր նւթական օգնութիւն հասցնել նրան: Եւ ահա կազմուում է « Կուլիտասեան ընկերութիւնը », որ կազմակերպում է երեք համերգ. առաջինը « Արտիստական բաւարեստ » , երկրորդը՝ « Արտիստիքական զանկնում » և երրորդը՝ « Առնայիկ ակումբում »: Մայիս

29ի համերգի մասին երաժշտագետ Անտոն Մայիլեանը «Ժողովրդի Ձայն»-ի (1919) N. 18-ում գրում է.

«Երգեցիկ խումբը յանձնւած էր կառավարելու Պ. Սպ. Մելիքեանին եւ ընկերութիւնը չի սխալուել իր ընտրութեան մէջ, հրաւիրելով նրան: Այնուչա միայն Սպ. Մելիքեանը, որպէս նրա աշակերտն աւելի մտա պիտի լինի կոմիտասի հոգուն, քան մի ուրիշը:

Կեանքով կարելի էր լսել խմբին, որ իր նրբութիւններով միանգամայն մտնեում էր կոմիտասին: Նկատուում էր սիստեմատիկ և ինտենսիւ աշխատանք, որը քաջալընութեան արժանի մի գործ է: Երգերից մի քանիսը մեծ յաջողութեամբ կրկնեցին»:

Նոյն համերգի մասին ուսանական «Կապիկապոս սոյփօ»-ում ԷՏ Մայիսի 1-ի համարում գրում է ...

«Առհասարակ Թիֆլիսի հայոց երգեցիկ ընկերութեան խումբը, որ երգում էր ամէն ինչ անգիր զնկավարութեամբ Սպ. Մելիքեանի, գտնուում էր իր բարձրութեան գագաթնակէտին: Ամէն ինչ երաժշտական էր, ուժեղ և հոյակապ. Թում է միայն շնորհաւորել պարոն Մելիքեանին, որ յաջողել է այդպիսի լուրջ նետանքների հասնելու»:

1920 թւի սէզօնում խումբը Թիֆլիսի կօնսերւատորիայի դահլիճում տալիս է երկու համերգ, որոնցից մէկը կայանում է ի նպաստ Սպ. Մելիքեանի: Մայիս 28-ի համերգը զեղարեւտական խոր տպաւորութիւն է թողնում հասարակութեան վրայ: Ահա թէ ինչ է գրում «Աշխատատոր»-ի (1920) N. 45-ում Մար. Մազմանեանն այդ համերգի մասին.

«Կրակից կազմւած էր բացառապէս հայ երեք երաժշտագէտների հեղինակութիւններից. Սպ. Մելիքեանի, կոմիտաս վարդապետի և Ռամանոս Մելիքեանի գործերից:

Հասարակութիւնը մեծ ոգևորութեամբ և ծափերով էր ընդունում համերգի բոլոր երգերն առ հասարակ, երբեմն կրկնել տալով, այնպէս որ համերգի յաջողութիւնն ամէն կասկածից դուրս է»:

Հանդիսականներից Եղիա Տէր-Փէրզեանի վրայ համերգն այնքան խոր տպաւորութիւն է թողնում, որ նա առանձին մի նամակով Սպ. Մելիքեանին այսպէս է յայտնում իր զգացմունքները.

Ընկեր Սպիրիդոն:

Շատ հազիւ է պատահում, նա մանաւանդ ներկայ իրականութեան մէջ, որ մարդու հոգեկան աշխարհը իրան այնքան զուր և բաւարարւած զգայ - ինչպիսին տեց Ձեր համերգը:

Ձեր երգի հարմոնիան ու նրբութիւնը նախ ինձ մեծ բաւականութիւն պատճառեց և երկրորդ հաստատ յոյս է ներշնչում, որ ձարա Մուրզա - Եկմախանները անյայտ չեն անցել և որ նրանց յաջորդները պատրաստ են նրանց տեղը բռնելու, որի համար ցանկանում են Ձեզ կատարեալ յաջողութիւն:

Ընդունեցէք յարգանքներս՝

ԵՂԻԱ ՏԵՐ - ՓԵՐԶԵԱՆ

1922 թւին Սպիրիդոնի համերգային գործունէութիւնը թեւակոխում է տարբեր ջրմաններ, Նոյն թւի Մարտ 25-ին Էջմիածնի Վեհարանի դահլիճում տալիս է մի համերգ, իսկ 1923 տարեշրջանում կազմակերպում է 3-4 համերգներ Էջմիածնում, Օշականում և Աշտարակում: Այնուհետև նրա խմբական գործունէութեան կենտրոն է դառնում Երևանը, 1924 թւին տօնուում է Հայաստանի Պետական համալսարանի երեքամեայ գոյութեան տօնը, Սպ. Մելիքեանը 70 հոգուց բաղկացած խմբով մասնակցում է կուլտուրական այդ մեծ տօնին:

Յաջորդ 1925 թւին խորհրդային Հայաստանի մայրաքաղաքում - Երևանում - հայ աշխատաւորութիւնն ողջունում է Ռիկովիկն, Չիլերիկին և Բուդեկին, ի պատիւ թանկագին հիւրերի պետական թատրոնում տրուում է երաժշտական երեկոյթ:

Այդ առիթով Սպ. Մելիքեանը կօնսերատօրիայի խմբով մասնակցում է երկրոյթին և արժանանում Ռիկովիչ շքմբ գնահատութեանը:

Այսպէս Սպ. Միլիքեանը հրապարակ է գալիս և իր գործնական մասնակցութեանը արժանացնոց տալիս կուլտուրական այն բոլոր նախաձեռնութիւններին, որոնք բղիում են ժողովրդի, մասայի հոգեբանութիւնից և ժամանակի պահանջներից: Դա ինքնին ծանր բայց հերոսական մի աշխատանք է: Եւ հէնց այդտեղ էլ կայանում է նրա համերգային գործունէութեան ամենամեծ արժանիքը:

III. Սպիրիդոն Մելիքեանի հասարակական գործունէութիւնը

Այժմ անդրադառնանք Սպ. Մելիքեանի երաժշտական, հասարակական այն գործունէութեանը, որ նա հանդես է բերել իր պաշտօնավարութեան տասնամեակում:

1909 թւականին հրատարակում է նա « Երաժշտութեան զարգացման խնդիրը մեզանում » բրօշուրը: Այնտեղ արծարծում է նա մի շարք երաժշտական ժամանակակից կենսական հարցեր: Որոնք են այդ հիմնական խնդիրները: Ամենաէականը մեր զարոցների երաժշտական դասաւանդութեան խնդիրն էր: Երաժշտասէր հասարակութիւն պատրաստելու տեսակէտից կենսական, առաջնակարգ մի հարց էր դա: Մեզանում դպրոցների երգեցողութիւնը ո՛չ միայն չէր գրւած իր կոչման բարձրութեան վրայ, այլ և գտնւում էր սարոսփելի անմխիթար դրութեան մէջ: Ինչ էր դրա պատճառը: Որովհետեւ երաժշտութիւնը մեզ մօտ, համարեա բոլոր դպրոցներում, երկրորդական առարկայ էր համարւում և յանձնւում էր պնսպիսի ուսուցիչների, որոնք անծանօթ լինելով մեր ժողովրդական կեանքին, նրա ստեղծագործական արժէքներին և մասնաւորապէս ժողովրդական երգերի ոգուն, աւանդում էին միօրինակ և միապապաղ ծրագրով: Այդպիսով տուժում էր նոր սերունդը, տուժում էր հայ երաժշտութիւնը: Անհրաժեշտ էր յեղաշրջել, յեղափոխել այդ դրութիւնը: Բայց ինչպէս: Այդ հիմնական հարցին պատասխանում է Սպ. Մելիքեանը. « Ամենից առաջ հարկատր է, գրում է նա իր գրքոյկի 23 էջում, որ մեր միջնակարգ դպրոցները աշխատեն ինչպէս միս առարկաների, նոյնպէս և երաժշտութեան համար մասնագետ ուսուցիչներ հրատիրել: Երկրորդ՝ երաժշտութեան դասերը պիտի շարունակուին ետե քարձր գոտիներում, շարքակոն ցոնե մէկ դասով »:

Բայց ի՞նչ է հարկաւոր հայ մանուկի զգացումն ազնւացնելու, նրա հոգեկան աշխարհը հարստացնելու և վերջապէս բազմակողմանի երաժշտական կրթութիւն տալու համար:

« Պետք է բաւականին պաշար ձեռք բերի, գրում է նա իր գրքոյկի 24 էջում, մեր և ուրիշ ազգերի ժողովրդական երգերի, յետոյ սօսանունների և ասիաների. պիտի գաղափար կազմե օպերաների և օրատօրիաների մասին. պիտի սովորի հարմունիայի հիմնական օրէնքները և վերջապէս պիտք է պատրաստի խմբա կետութեան և մանաւանդ ստուցյութեան »:

Այսպէս՝ մանուկների երաժշտական ճաշակը կրթելու և հայ երաժշտութիւնը վարճացնելու միակ ուղիղ և կտրուկ ճանապարհը համարում է նա հայ և եւրօպական երաժշտութեան ծանօթութիւնն և ուսումնասիրութիւնը: Հէնց այդ նպատակով էլ երեխաներին տալիս է նոր, աշխոյժ և սիրուն ժողովրդական և եւրօպական (Մօցարտի, Ռ. Շումանից և Բրամսից) երգեր: Այդպիսով լրացնում է նա մի կարեւոր պակաս:

Այդ դեռ բաւական չէ:

(Շարայարեղի)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ